Կը հրատարակուի ամիս երկու ան-
գամ ամսոյն 1 եւ 15ին.
Տարեկան գինն 24 ղուրուշ.
Վեցամսեայ 12 ղուրուշ.
Մէկ հատը 40 փարա.

# ԵՐՋՈՒԻԿ
# ՏԵՐՕՆԱՅ

Որ եւ է նամակագրութիւն
Դուրս երկրէ լրագիրները
խմբագրին պէտք ճամբէ.
Լրագրոյ վերաբերեալ բաները
ու խմբագրին պէտք ուղղուին.

Ե. ՏԱՐԻ. ԹԻՒ 21 — 1864 — ՅՈՒԼԻՍ 1

## Խաղաղութիւն ոչ մնաց.

Օրմը Տ. Թ. համբաւաւոր քահանայն Բագումի խորանէն ելած Աստուծոյ խորանը ելաւ. երեկոյեան ժամասացութիւն կը կատարէր եւ «Լոյս ձայնից» աղօթքը Տ. Թ.ին համար գնաց, ու տան բառով լմնցուց աղօթքը, մեկալ բառերու հետ — «Խաղաղութիւն ամենեցուն» ըսելն ալ կուլ տուաւ: Երբոր ժողովուրդ եւեւէն պոռաց «Տէր տէր, խաղաղութիւնը չըմնաց»։ Դարձաւ դէպ ի ժողովուրդ եւ հետեւեալ բացատրութիւնները խօսեցաւ. — «Խաղաղութիւն ոչ մնաց, սիրելիք.

«Պոլիս շատուց ի վեր է որբագաններուն եւ ամիրաներուն եւ հասարակութեան մէջ կռիւ կայ. խաւարեալի եւ լուսաւորեալի, հաւատացեալի եւ անհաւատի պատերազմ կայ. եկեղեցականի եւ աշխարհականի ատելութիւն ու մատնութիւն կայ. Սահմանադրութիւն ու զօրի չ'ու զօրի խըռովութիւն կայ. շատ բան կայ. ամէն բան կայ. բայց աւել չի գայ. — «Խաղաղութիւն ոչ մնաց»։

«Նախագահ Պատրիարք չկայ, պատրիարքութեան կռիւ կայ. պոլսեցւոց մէջ ատայս կուսակցութիւն եւ հակառակութիւն կայ. միաբանութեան մէջ խիստ անգամ եւ յանդգնութիւն եւ անկարգութիւն կըշատնայ. մէկ զմէկ կ'կոխեն, իրարու վրայ կ'ելնեն. Նախագահ Ս. աթոռը ամէնն ու վրայ կ'ըլլեն. բոլոր Պոլիսը եւ Հայերը կխառնեն, եւ շատ բան կ'անեն. ամէն բան կ'անեն. բայց աւել չի գայ. — «Խաղաղութիւն ոչ մնաց»։

«Ս. ան քանի՜ տարիէ առաջնորդական ընտրութեան եւ հասարակութեան կռիւ կըշարունակեն. իրարու օձիքը բռներ են. մէկ զմէկ կ'անպատուեն, կ'բզքեն, կմատնեն, կ'զատեն. կ'վնասուին եւ կ'վնասեն, խառնութիւն կ'հանեն. շատ բան կ'հանեն. ամէն բան կ'հանեն. բայց աւել չի գայ. — «Խաղաղութիւն ոչ մնաց»։

«Մշոյ աշխարհ եւ Ս. Կ. վանքը իր անուն բառի. յաւար կռիւն ու խռովութիւն միշտ կայ. զիրար կ'մատնեն, զիրար կ'մերժեն. զիրար կ'հալածեն. ու ինչ որ ուզեն կ'գործեն. շատ բան կ'գործեն. ամէն բան կ'գործեն. բայց աւել չի գայ. — «Խաղաղութիւն ոչ մնաց»։

«Կարին թէպէտ ձայն բարձր չեն հաներ, բայց մէջէն մէջէն զիրար կ'խայթեն. զիրար կ'վիրաւորեն. Նորութիւն ու հնութիւն, լուսաւորութիւն ու նախապաշարմունք զիրար կ'թունաւորեն. շահասէրներ ու ագահասէրներ մէկ զմէկ կ'խոցեն. անոնց խըռովութիւն բանութեան եւ եկեղեցի շըղթաներով կապուեր է. Արտաւազդայ շուները կ'կրծեն անոնց շղթաները. եւ երբեմն երբեմն անոնք կ'շարժեն. Աստուած տայ երբեք չլուծուի. բայց չէ, կասկածելուն անշուշտ արժանի ալ կայ. ու այսպէս կապանաց մէջ տակաւին կուզեն շարժիլ. շատ բան կուզեն շարժել, ամէն բան կուզեն շարժել. բայց աւել չի գայ. — «Խաղաղութիւն ոչ մնաց»։

«Բաղէշը՝ որ փոքրիկ քաղաք է, այնտեղն ալ անհոգութեան եւ մթութեան մէջ չարիքը կ'խաղան. պէս պէս անկարգութիւններ, անարժան դէպքեր, աղտաղինաս գործքեր կ'պատահին. շատ բան կ'ըպատահին. ամէն բան կ'պատահի. բայց աւել չի գայ. — «Խաղաղութիւն ոչ մնաց»։

« Տրապիզոն ծովու բերան է, ճիշդ ծովու նման կ՚ծփայ. առաջնորդութիւն, իշխանաւորութիւն եւ հասարակութիւն զիրար կ՚խառնուին. նաւ մը կար իրենց մէջ Ե. Ս. անի հողմավար գնաց. բայց հողմեր դեռ կփչեն. սիրտերը կ՚խառնեն. շատ բան կ՚խառնեն. ամէն բան կ՚խառնեն. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Քիւրդիստան՝ բոլոր Հայեր գրկանաց մէջ խաւարին ու տառապեալ վիճակի մէջ. հրաշալի հովիւ մը կար հոն, որ բոլոր Պոլիսը հրաշազարդեց, բայց Քիւրդիստանը նորէն պատանքներով պատեց, փաթաթեց. շատ բան փաթաթեց. ամէն բան փաթաթեց. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Զմիւռնին եռապետութիւն ու հասարակապետութիւն զիրար կ՚բաբախեն. երկուքն ալ հզօր կերպով կ՚մարտնչեն. կարծես հին Հռովմայեցւոց Ոգին այս քաղաքն է մտեր. չեն դադարեր. իրարու ճակատ կուտան. շատ բանի ճակատ կուտան, ամէն բանի ճակատ կուտան. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Եգիպտոսէն որոտման ձայն կուգայ. Գաբրիէլ եւ Մանուէլ ալիք ալեաց դէմ կ՚հանեն »։ « Թէքիրտաղ ազգային վէճ կայ. իշխանն ու ժողովուրդ միմեանց հետ կ՚կռուին. եւ քահանայապետն ալ իրենց մէջ տեղը կ՚առնեն կ՚խառնեն. խաղաղացուցիչը կղրկվի հոն. խռովութիւնն ալ նա կ՚սերմանէ. որ շատ բան սերմանող է. ամէն բան սերմանող է. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Պանտրմայէն անդնդային ձայնը կուգայ. Սօլայ Մատթէոս հոն անաստուածութիւն կ՚քարոզէ. այստեղ Հայն եւ իւր Հայրը իբրեւ ոչխար միամիտ կարածեն »։ « Նիկոմիդիոյ վիճակի մէջ կ՚կռուին. եւ կրօնափոխութեան կ՚դիմեն շուտով. շատ բանի կըդիմեն. ամէն բանի կըդիմեն. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Փոքր Հայոց քաղաքներ տեղ լաւեր տեղ քիներ են. տեղ տեղ ալ նոր գաղթեր, նոր սթափեր են. ոմանք ալ տեղ սկսեր են, տեղ նոր պիտի սկսեն. շատ բան պիտի ըսկսեն. ամէն բան պիտի սկսեն. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Էջմիածին եպիսկոպոսներ կ՚շատցունէ, Երուսաղէմ. Ս. Կարապետ, Արմաշ, Ընդապաներ, Սիս, Աղթամար եւ այլ շատ մը վանքեր վարդապետներ աժան աժան ու առատ առատ կ՚ձեռնադրեն. քահանաներ կ՚բազմացունեն. արժան անարժան. պիտանին անպիտան չեն նայեր. հաստ ու բարակ մէկ է եղեր. ատոնք կ՚շատնան. շատնան իրարու հետ կ՚կռուին. խռովութիւն կ՚հանեն, կ՚կեղծաւորվին. եւ պէս պէս բաներ կ՚հնարեն, կ՚անեն. բայց ատոնց մեղք չ՚կայ. մեղք Էջմիածնայ է որ եպիսկոպոսներ շատցուց. եւ եպիսկոպոսներ գաւառք ձեռնադրեցին. վերջապէս բանն եղաւ. բայց մայրը Էջմիածին եղաւ. շատ բան եղաւ. ամէն բան եղաւ. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Այսպէս ալ բոլոր քաղաքաց խռովութիւններ եղան եւ կ՚լինին, ամենու մայր Պօլիսն է. շատ բան այնտեղէն կ՚լինի. ամէն բան այնտեղէն կ՚լինի. բայց ասել չի գայ. — Խաղաղութիւն ոչ մնաց »։

« Երբ այն տեղ խաղաղութիւն լինի. ամէն աշխարհն ալ կ՚խաղաղի եւ սոյն ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ կ՚կարդանք եկեղեցւոյ մէջ. առ այժմ « խաղաղութիւն ոչ մնաց »։ Այս քիչ ասածի դուք շատ իմացէք ։ Օրհնեալ էք եւ օրհնեալ եղերուք »։ Ի Փ. գիւղ. Անցեալ ձմեռ։

---

Այս յօդուածը որ շատոնց մեզ հասած էր, ընթերցողք գիտեն որ մեզ ալ ժամանակ ու խաղաղութիւն մնացեր չէր. ուստի յուշացաւ. յուշացաւ՝ եւ մենք կ՚հրատարակենք այժմ իբր համառօտ արձագանք Պոլսոյ Ազգային Լրագիրներու տխուր ձայներուն. եւ շատ տեղերէ մեզ հասած նամակներուն ու համբաւներուն. ո՛հ Ազգը ամէն կողմէն կարեվէր ցաւոց մէջ է... Մխիթարէ զմեզ Աստուած. մխիթարէ Սահմանադրութիւն. Ալ վերջին շունչը հասաւ Հայը. Խիստ կ՚երկնի. եւ թէպէտ կ՚շարժի ու իբր թէ կ՚քալէ. սակայն դեռ շատ պակաս շատ տկար է. Ո՛հ գործը շատ՝ մարդ քիչ է. անունը շատ ազգասէր քիչ է... Այս տեղ շատ բան կայ ասելու, բայց ասել չի գայ, ցաւիլ ու լռել պէտք է. Աստուած աղաչել, եւ յուսալ պէտք է....

լինել ։ Եւ անխելք ու անխիղճ իշխան իր մեծութենէն իյնալ ու բանի չխառնուիլ ։

Ա. Կ'երեւի, համարենք թէ դու այն կատարեալ ու բարի մարդն ես. եւ մեր աղան ու երեսփոխան ինչ անիրաւ մարդ են գիտես. Սահմանադրութիւն կրնայ զքեզ աքսորել, եւ զիս երեսփոխան, ու զանոնք ձգել ։

Մ. Այո Սահմանադրութեան բուն պաշտօնն այդ է արդէն ։

Ա. Բայց նա հարուստ է. տէր անոր կ'կերցունէ ու ինքը կ'վաստկի մեծութիւն դարձեալ ։

Մ. Որին պէտք կերցնէ. այսուհետեւ Հասարակ ժողովուրդ պէտք ընտրէ ու փախէ իրեն առաջնորդ եւ իրեն իշխան ։ Գեղացին պէտք ընտրէ իրեն մեծ իրեն համար եւ իրեն ուզածը ։ Եւ ալ մէկ մարդ չպիտի լինի աղօ, այլ, ութ մարդ՝ իրենց ուզածը մէկ հոգի կընտրեն, տասն մարդը՝ իրենց ուզած մէկը, քսան մարդ՝ իրենց ուզած մէկը. եւ այսպէս գեղին բազմութեան համեմատ քանի մարդ քանի հոգի ուզեն կընտրեն ։

Ա. Անոնք ինչ պիտի ընեն ։

Մ. Պիտի ընեն ինչ որ աղան ու երեսփոխ կընէին. եկեղեցին պայծառ պահեն, գեղի մէջ դպրատուն բանան ։ Գեղացւոց մէջ կարիք լինի խաղաղացունեն ։ Գեղի ամէն բան իրենց ձեռքով պիտի լինի, ու իրենք պիտի իմանան ։

Ա. Մեր գեղ արդէն եկեղեցի չկայ. դպրատուն էլ չինեն որ դպրոց չկայ, էն թող տանք. բայց մէկալ բաներ, ասենք, սալեան է, փրկէ է ու ամենայն բան, որ դոցա ձեռքով ժողովուի, առեւ անիրաւութիւն չանէ՞ն ։

Մ. Անիրաւ մարդ անիրաւութիւն կ'անէ. բայց կ'պաւուենք ձանձրոց ու իրաւունքի տէր մարդիկներ կ'մտնան, այն անիրաւն կ'հանեն պաշտօնէն ու նոր մի կընտրեն անոր տեղ ։

( Շարունակութիւն )։

Ջուր սիւն կանանչցած ։

Մուշէն կ'ծանուցանեն թէ Արթաղա գեղը՝ որ երկու ժամ հեռի է Մուշէն ։ գեղացւոյմը տուն ջուր սիւն՝ իբր քսան տարունէ շինուած. պատուանդանը քարէ վերայ դրուած, որ գետնէն երկու թիզէն աւելի բարձր է, եւ վերի գլուխը ների տակ հոգուցուած ։ Անցեալ տարի այս տան տէրը նեղութենէն կ'ուզէ իր ընտանիք կ'զաղթէ գեղէն. եւ դուռը կ'մնայ գոց ։ Այս տարի դուռը կ'բանան. եւ կ'տեսնան որ քսան տարեկան ջուր սիւնը վարէն մինչեւ ի վեր կանանչեր, նոր տերեւ, թարմ տերեւներով զարդարվեր ։

Աստուծոյ կարողութեան եւ ողորմութեան նշան համարելով զայս տեսնող բարեպաշտ ժողովուրդ. մեծ մասաք կ'նուիրեն Ամենակալին. եւ այսպէս վերակենդանութիւն կը պատմեն ծերացեալ, չորացեալ, եւ ցամաքեալ Հայաստանին. մանաւանդ իրենց (Տարօնցւոց) սիւնացեալ եւ դալարակ անձամբ վէճակին ։

Կարեւոր ծանուցում ։

Ահա կ'մօտենայ դարձեալ Վարդավառ. եւ մենք կ'փութանք կանխաւ կրկին ծանուցանել հասարակութեան, որ ինչպէս անցեալ տարի Հայերէն առանձին շրջաբերական հրատարակեց, այս տարի եւս պաշտօնական կերպով առաջիմար կ'դրէ ի Պոլսոյ զայն թէ՝ արգելուած եւ վերջացած է Վարդավառ տօնակատարութեան (փառայիր) Ս. Կ. վանուցս

Ամէն կերպ միջոցներ եւ հսկողութիւնները ի գործ պիտի դնէ այս մասին Ս. վանուցս առ ժամանակեայ կառավարութիւն Տեօրէն ժողով ։ Ուստի ով որ փոխանակելու կամ գնելու նպատակաւ ի վանքս գայ, կարգելուի եւ յետս կ'դարձուցվի ։ Ուխտաւորաց համար ոչ միայն արգելք չկայ, այլ եւ յատուկ հրաւէր ալ կայ. որոց շնորհեւ որ վանքս չէնե. բարեկարգ կ'մնայ, մանաւանդ այս տարի վանքս մեծ կարօտ եւ պակասութիւն ունի ։

Խմբագիր Տարօնոյ Արծուիկին
Գ. Սրուանձտեանց, Ձեռ Ս. Արծրունի.

Ի ՏԱՐՕՆ · Ս · ԿԱՐԱՊԵՏ · ՏԻՊ Տ · ԱՐԾՐՈՒՆՈՅՆ